



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍԱՐԱՏՈՎԿԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

№ 12-12/ՍԳ

<27 > Դեկտեմբերի 2016թ.

ՀՀ Լոռու մարզպետ պր – ն
Ա. Նալբանդյանին

Կից ներկայացնում եմ Մարատովկա համայնքի ավագանու թիվ 36 որոշումը :

Առդիր էլեկտրոնային նյութ:

Համայնքի ղեկավար՝



Գ. Մարդոյան



ՀԱՅ ԱՍՏ ԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՏՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարատովկա համայնք, հասցե՝ Սարատովկա,
Հեռախոս՝ 099045550

Էլ. Փոստ՝ saratovka.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 20 » դեկտեմբերի 2016 թվականի N 36 –Ն

ՍԱՐԱՏՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 Թ.Թ. ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ
ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տնդական ինքնակառավարման մասին » Հայաստանի
հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Հաստատել Սարատովկա համայնքի 2017- 2021 թ.թ. սոցիալ տնտեսական
զարգացման հնգամյա ծրագիրը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան
հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	դեմ	ձեռնպահ
Նորիկ Վելիցյան			
Գիվի Քարտաշյան			
Արտակ Պողոսյան			
Նարինե Ավետիսյան			
Անի Սարգսյան			

Համայնքի ղեկավար՝



Գ. Մարդոյան /

2016թ. դեկտեմբերի 20
Գ. Սարատովկա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՏՈՎԿԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ**

**2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 20.12.2016 թվականի թիվ 36-Ն որոշմամբ

նիստի ամսաթիվը

ՍԱՐԱՏՈՎԿԱ 2017թ.

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք.....	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն	5
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն	5
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը	6
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը	8
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները 9	
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ	9
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՄ) վերլուծություն	12
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում	13
3.1. Համայնքի զարգացման տեսլական	13
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ	14
4. ՀԶԾ ֆինանսավորում	18
5. ՀԶԾ մոնիթորինգ	18

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հարգելի համագյուղացիներ

Ձեզ եմ ներկայացնում Սարատովկա համայնքի զարգացման ծրագիրը: Համայնքի զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարատովկա համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրի ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2021 թվականին, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները: Համայնքի զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Չարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ):

Համայնքի զարգացման ծրագիրն իր մեջ ներառում է՝ համայնքի իրավիճակի բնութագիրը, վերլուծությունը և գնահատումը, համայնքի տեսլականը, ռազմավարության և ՀԶԾ-ի հիմնական նպատակների սահմանումը, նախատեսվող հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերը, ֆինանսական իրավիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը, ոլորտային ծրագրերը, գույքի կառավարման ծրագիրը, զարգացման ծրագրի մոնիթորինգը:

Համայնքի հիմնական խնդիրներն են՝ Համայնքի բնակչության մի մասը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում: Համայնքում առկա է զանազան հիվանդությունների վտանգ: Գյուղացիները գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ՝

ա/ հաճախակի են լինում երկարատև անձրևներն ու կարկտահարությունը, որից շատ է տուժում գյուղատնտեսությամբ ու անասնապահությամբ զբաղվող գյուղացին: Նրանք կորցնում են բերքի 50%-ը,

բ/ Անասնապահությամբ զբաղվում է բնակչության հիմնական մասը: Երաժշտի տարիներին անասնապահության բնագավառում նույնպես մեծ դժվարություններ են առաջանում :

Խոտի և խտացված կերի անբավարարվածության պատճառով դժվարանում է անասունների մսուրային շրջանի կազմակերպումը : Նրանց ապրուստի հիմնական միջոցը կաթն է, որի քանակը կախված է խոտհարքների ու արոտների բերրիությունից ,

գ/ Գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների:

Համայնքի Գետավան բնակավայրում առկա է զանազան հիվանդությունների վտանգ, քանի որ՝

ա/ խմելու ջրի մանրէազերծում և ֆիլտրում չի կատարվում,

բ/ վտանգ կա, որ կեղտաջրերը կարող են խառնվել խմելու ջրին,

գ/ կենցաղային աղբահեռացում չի կատարվում:

Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմի բոլոր աշխատակիցները և համայնքի ավագանին, քննարկվել ու հաշվի են առնվել հանրային լսումների արդյունքում կատարված բոլոր առաջարկությունները: Ծրագիրը հաստատվել է համայնքի ավագանու անդամների կողմից:

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Սարատովկա համայնքը գտնվում է մարզկենտրոնից 45 հեռավորության վրա: Համայնքի տարածքը կազմում է 2223,39 հեկտար: Համայնքն ունի աշխարհագրական ոչ այնքան բարենպաստ դիրք, ծովի մակարդակից բարձր է 1480մ, չկան անտառածածկ տարածքներ: Համայնքի միջով հոսում է Տաշիր գետը: Համայնքի տարածքը գտնվում է կլիմայական ցուրտ գոտում: Ձմեռը ցուրտ է, կայուն և երկարատև ձյանածածկոյթն սկսվում է նոյեմբերի վերջից և վերջանում ապրիլի 2-րդ տասնօրյակում: Գարունը երկարատև է ու ցուրտ: Յրտահարությունները միջին տվյալներով վերջանում են մայիսի 2-րդ կեսից: Ամառը կարճ է, զով ու չոր: Աշունը սառն է, առաջին կեսում գերակշռում է քիչ ամպամած ու տաք եղանակը, երկրորդ կեսը փոփոխական է: Աշնանային ցրտահարություններն սկսվում են սեպտեմբերի վերջին և հոկտեմբերի սկզբին: Հաճախ են լինում երկարատև անձրևները և կարկտահարությունը, որից տուժում են գյուղատնտեսությամբ ու անասնապահությամբ զբաղվող գյուղացիները: Համայնքի բնակիչները հիմնականում զբաղվում են անասնաբուծությամբ, դաշտավարությամբ, մեղվաբուծությամբ և թռչնաբուծությամբ: Համայնքն ունի միջնակարգ դպրոց, բուժ- կետ:

Սարատովկա գյուղը հիմնադրվել է 1910թվականին: Եկատերինա երկրորդի ժամանակ աքսորված մալականներից Բոգդանով ազգանունով մի մարդ բնակություն է հաստատել այդ տարածքում, զբաղվել անասնապահությամբ և այդ մասը անվանել են Բոգդանով խուտոր : Հետզհետե մոտակա գյուղերից եկել և բնակություն են հաստատել այստեղ և գյուղը անվանվել է Սարատովկա :

Համայնքը վարչական տարածքով սահմանակից է Տաշիր և Ստեփանավան քաղաքներին:

Համայնքի մոտով է անցնում Երևան-Թբիլիսի մայրուղին : Համայնքի տարածքում է գտնվում Գետավան գյուղը` 24 առանձնատնով:

այդ թվում՝

0-1 տարեկան – 6

1-6 տարեկան- 35

6-17 տարեկան- 66

17-25 տարեկան – 25

25-42 տարեկան- 156

42-62 տարեկան- 103

63 և ավելի – 76

Բնակչության սոցիալական կազմը՝

այդթվում՝

թոշակառուներ –62

միակողմանի ծնողագուրկ երեխաներ – 6

հաշմանդամներ – 8

որից՝

0-5 տարեկան – 1

6-17 տարեկան -1

աշխատանք ունեցողներ – 203

որից՝ գյուղատնտեսությամբ զբաղվածներ-153

ընտանիքների (ծխերի) թիվը-135

փախստականներ- 15

2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 12123,0 մլն դրամ:
- Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 8603,0 մլն դրամ(70,9%),
- Ստորև բերված են համայնքի հիմնական արդյունաբերական ձեռնարկությունների եկամուտները՝

Ձեռնարկություններ	Քանակը	Եկամուտներ, հազ.
-------------------	--------	------------------

Քարի հանք	1	125
Խանութ	1	20000

- Աղյուսակում բերված են համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները 2016թ.

Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը	Ցանքատարածության չափը	Արտադրանքի քանակը
կարտոֆիլ	15,96հա	8տ
կաղամբ	0,6հա	0,2տ
բանջարեղեն	1,18հա	0,5տ
միս		28տ
բուրդ		0,5տ
ձու		70հազ.հատ
մեղր		0,5տ

Անասունների տեսակը	Գլխաքանակը
Խոշոր եղջերավոր անասուններ	752
Այդ թվում կովեր	423
Մանր եղջերավոր անասուններ	196
Այդ թվում մայրեր	157
խոզեր	2
Այդ թվում մայրեր	-
թռչուններ	900
Այդ թվում հավեր	841
մեղվաբնտանիքներ	97

- Համայնքում գործում է միջնակարգ դպրոց, որտեղ սովորում են 79 աշակերտ:

Դպրոցն ունի 22 աշխատող:

- Համայնքում գործում է մեկ բուժ-կետ, որն սպասարկում է 2 համայնքների :

Բուժ-կետում աշխատում է 1աշխատող:

- Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են 29 ընտանիքներ,
- Համայնքում գործազրկության մակարդակը կազմում է 33,6%:
- Սարատովկա համայնքի պատմական և մշակութային հուշարձանները :
 - երկրորդ համաշխարհային պատերազմի զոհերի հուշարձան
 - Արցախյան ազատամարտի զոհերի հուշարձան

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

Սարատովկա համայնքում հինգ տարիների ընթացքում նախատեսվում է իրագործել հետևյալ ծրագրերը.

1. Սարատովկա համայնքի<<Գետավան գյուղի գազաֆիկացում>>

Այս ծրագիրը իրագործելով Գետավան գյուղը կապահովի բնական գազով, գազամատակարարումը նախատեսվում է իրականացնել Տաշիր-Ստեփանավան տարածաշրջանը սնող մ/ճ գազատարից:

Մայրուղային գազատարը նախատեսվում է կառուցել վերգետնյա եղանակով հենարանների վրա 1,0մ բարձրությամբ: Գազատարի հատվածը, որն անցնում է պողպատյա խողովակաշարով, անհրաժեշտ է կառուցել էլեկտրաեռակցվող խողովակներից: Գազատարի ամբողջ երկարությամբ նախատեսված է կոմպեսատորներ 100-105մ հեռավորության վրա և գազի շարժման ուղղությամբ առաջացող ստատիկ էլեկտրականությունից, գազատարը պաշտպանելու համար մայրուղու ամբողջ երկարությամբ նախատեսված է տեղադրել հողանցման սարքավորումներ:

Պահանջվում է կատարել հետևյալ աշխատանքները.

- 1.Փափուկ բնահողի քանդում հենարանների հիմքերում,
- 2.Քանդած բնահողի հարթեցում տեղում կամ տեղափոխում,
- 3.Մոնոլիտ բետոն և տեղադրում հենարանների հիմքում,
- 4.Գազատարի և հենասյունների յուղաներկման աշխատանքներ,
- 5.Խողովակների փչամաքրում, խողովակների փորձարկում:

Ծրագրի ավարտից հետո Գետավանի բնակիչների համար կստեղծվի սոցիալ-տնտեսական բավարար պայմաններ:

2.<<Որակյալ խմելու ջրով ապահովում և ջրագծի կառուցում>>

Այս ծրագրի հիմնական նպատակն է ապահովել Սարատովկա համայնքի Գետավան բնակավայրը շուրջօրյա խմելու ջրով, կանխել կեղտաջրի ներթափանցումից առաջացող սուր վարակիչ հիվանդությունները, միաժամանակ կբարձրանա բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

3.<<Ճանապարհների բարեկարգում>>

Ծրագրի նպատակն է ապահովել տրանսպորտի բոլոր միջոցների համար բավարար երթևեկության պայմաններ՝ տարվա բոլոր եղանակներին:

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

N	Եկամուտի տեսակը	2017	2018	2019	2020	2021
	Ընդամենը եկամուտներ	12123,0 մլն	12244,0 մլն	12494,0 մլն	12594,0 մլն	12644,0 մլն
Ա	Հարկային եկամուտներ	8603,0 մլն	8619,0 մլն	8669,0 մլն	8669,0 մլն	8419,0 մլն
1	Հողի հարկ	4637,0 մլն	4637,0 մլն	4637,0 մլն	4637,0 մլն	4637,0 մլն
2	Գույքահարկ	744,0 մլն	750,0 մլն	800,0 մլն	800,0 մլն	850,0 մլն
3	Եկամտահարկ					
4	Այլ հարկային եկամուտներ					
Բ	Տուրքեր					
1	Պետական տուրքեր					
2	Տեղական տուրքեր	12 հազ	12 հազ	12 հազ	12 հազ	12 հազ
Գ	Ոչ հարկային եկամուտներ					
1	Վարձավճարներ	3210,0 հազ	3220,0 հազ	3220,0 հազ	3220,0 հազ	3220,0 հազ
3	Տեղական վճարներ	20,0 հազ.	25,0 հազ.	25,0 հազ.	25,0 հազ.	25,0 հազ.
4	Այլ ոչ հարկային եկամուտներ					
Դ	Դոտացիա	3500,0 մլն	3600,0 մլն	3800,0 մլն	3900,0 մլն	3900,0 մլն
Ե	Եկամուտներ կապիտալ գործառնություններից					
Զ	Տարեսկզբի ազատ մնացորդ					

2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Սարատովկա համայնքի առջև ծառայած ընդհանուր հիմնական խնդիրներն են՝

Համայնքի բնակչության 80%-ը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում: Համայնքում առկա է զանազան հիվանդությունների վտանգ: Համայնքի զարգացման հիմնական խոչընդոտող գործոններն ու դժվարությունները նշված են ստորև.

.Համայնքի գույքի կառավարման խոչընդոտներն են՝

.Ֆինանսական սղությունը,

1) Երիտասարդության ներգրավմամբ ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպման խոչընդոտող գործոններն են՝

.մշակութային կյանքի պասիվությունը, .

2) Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությանը խոչընդոտող գործոններ են՝

.գործազրկությունը,

. Գետավան գյուղի գազաֆիկացման բացակայությունը

., խմելու ջրի անորակությունը/մանրէազերծման, ֆիլտրման բացակայությունը/,

. խմելու ջրի անհավասարաչափ բաշխումը,

3) ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսմանը խոչընդոտող գործոններն են՝

. սպորտհրապարակ, մարզադահլիճ և մարզագույք չունենալը,

4) Համայնքում բնակարանային շինարարության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝ . համայնքաբնակների աղքատությունը,

5) Համայնքի բնակավայրերի կառուցապատմանը, բարեկարգմանը և կանաչապատմանը, համայնքի աղբահանությանը և սանիտարական մաքրմանը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովմանը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանմանը և գործունեության ապահովմանը խոչընդոտող գործոններն են՝

. ջրմուղ-կոյուղուրացակայությունը,

. խմելու ջրագծի և ջրի ներքին ցանցի քայքայված վիճակը,

. միջոցների սղությունը,

. փողոցային լուսավորության բացակայությունը:

6) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպմանը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանմանը և շահագործմանը խոչընդոտող գործոններն են՝

. միջհամայնքային, ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների քայքայված վիճակը,

7) Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը խոչընդոտող գործոններն են՝

. քաղաքացիական պաշտպանության գիտելիքների պակասը,

. սեյսմիկ գոտում գտնվելը,

. աղետներին պատրաստվածության ծրագրի բացակայությունը,

.համայնքաբնակները պատրաստ չեն համապատասխան քայլերի դիմել վերահաս և փաստացի վտանգի դեպքում:

8) Գյուղատնտեսության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.ոռոգման ցանցի բացակայությունը,
.սպառման շուկայի դժվար հասանելիությունը,

9) Համայնքում շրջակա միջավայրի պահպանությանը խոչընդոտող գործոններն են՝

.հեղեղատարների բացակայությունը,
.աղբահեռացում չկազմակերպելը,

10) Սարատովկա համայնքում՝ զբոսաշրջության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքի հեռավորությունը մայրաքաղաքից,
.գովազդի բացակայությունը,
.տուրիստական գործակալությունների հետ կապ չունենալը,

11) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպմանը խոչընդոտող գործոններն են՝

.գործարար միջավայրի բացակայությունը,
.ձեռնարկությունների բացակայությունը,
.երիտասարդների միգրացիան,

12) Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.երիտասարդների չամուսնանալը,
.երիտասարդ ընտանիքների սոցիալապես պաշտպանված չլինելը,
.պետության կողմից աջակցության պակասը, աղքատությունը,

13) Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացմանը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմաններ իստեղծմանը խոչընդոտող գործոններն են՝

.անվճար բուժ սպասարկման քիչ լինելը,.

14) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքում համապատասխան պայմաններ չունենալը,

15) Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստելուն խոչընդոտող գործոններն են՝

.հեռահաղորդակցման տեխնոլոգիաների գիտելիքների պակասը,
Համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց

Ֆինանսական անկախության ապահովման նպատակով բարեգործության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

- .համայնքի երիտասարդների կամավորության պակասը,
- .հանրային համախմբվածության և մասնակցության թույլ լինելը,
- .տեղեկատվական տեխնոլոգիաներին չտիրապետելը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԾՆՈՂ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Գյուղացիները գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ՝

ա/հաճախակի են լինում երաշտի տարիներ,որից Խոտի և խտացված կերի անբավարարվածության պատճառով դժվարանում է անասունների մտուրային շրջանի կազմակերպումը : Նրանց ապրուստի հիմնական միջոցը կաթն է,որի քանակը կախված է խոտհարքների ու արոտների բերրիությունից ,

բ/ գյուղացին համայնքի պրոբլեմները իր սեփականը չի համարում,

գ/ գյուղացին չի կարողանում իրացնել իր արտադրանքը,

դ/ գյուղացին չի կարողանում կատարել իր հարկային պարտավորությունները

ե/ Գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների: Համայնքում առկա է զանազան հիվանդությունների վտանգ, քանի որ՝

ա/ խմելու ջրի մանրէազերծում և ֆիլտրում չի կատարվում,

բ/ վտանգ կա, որ կեղտաջրերը կարող են խառնվել խմելու ջրին,

գ/ ջուրը հավասարաչափ չի բաշխված, ուստի բնակչության մի մասը հաճախ զրկվում են ջրից,

դ/ կենցաղային աղբահեռացում չի կատարվում:

2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՄ) վերլուծություն

<i>Համայնքի ուժեղ կողմեր</i>	<i>Համայնքի թույլ կողմեր</i>
.Բանիմաց աշխատուժի առկայություն	.Ոռոգման ցանցի բացակայություն
.Միջնակարգ դպրոցի առկայություն.	.Խմելու ջրի ցանցի անմխիթար վիճակ
Բուժ-կետի առկայություն	.Սոցիալապես ծանր վիճակում գտնվող ընտանիքներ
.Համայնքի պահուստային հողերի և արոտավայրերի	.Ֆինանսական ռեսուրսների բացակայություն

<p>առկայություն</p> <p>.Լճերի և ճահիճների առկայություն</p> <p>.Գյուղտեխնիկայի առկայություն</p> <p>.Հեռահաղորդակցության առկայություն</p> <p>.Գազաֆիկացման առկայություն</p> <p>.Համայնքի կողքով է անցնում Երևան-Թբիլիսի մայրուղին</p> <p>.Ողղակի ընտրությամբ ղեկավար ընտրելու հնարավորություն</p>	<p>.Արտագնա աշխատանքի մեկնողների թվի աճ</p> <p>.Ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակ</p> <p>.Հողերի անբերրիության պատճառով գյուղացու եկամուտների նվազում</p> <p>.Աշխատատեղերի պակաս</p> <p>. Համայնքը չունի անտառամերձ գոտիներ</p>
<p><i>Հնարավորություններ</i></p>	<p><i>Սպառնալիքներ</i></p>
<p>.Մեծ աշխատուժի առկայություն,</p> <p>.Խմելու ջրի պաշարի առկայություն,</p> <p>.Քարի հանքի առկայություն,</p> <p>.Համայնքի տարածքում է գտնվում <<Ստեփանավան>>ՓԲԸ օդանավակայանը</p>	<p>.Տարերային աղետների վտանգ</p> <p>.Գյուղ. մթերքների գների նվազում</p> <p>.Գյուղատնտեսական մթերքների արտահանման դժվարություն</p> <p>.Սպառման շուկաների դժվար հասանելիություն</p> <p>.Խիստ կլիմա /ցրտահարություն/</p> <p>.Արտագաղթ.</p> <p>Հիվանդությունների առաջացման վտանգ</p> <p>Ծնելիության նվազում</p>

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1. Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի զարգացման տեսլականն է՝

Ունենալ զարգացած և հզոր համայնք, որտեղ առկա են ձեռնարկություններ, և մարդիկ ապրում են արժանապատիվ կյանքով:

- Համայնքի ուժեղ կողմերի և միկրո-հնարավորությունների վրա հիմնված վեր հանել համայնքի խնդիրները, և խոչընդոտները հաղթահարելով՝ ապահովել կայուն, շարունակական զարգացում ու հզորացում:
- Հետևողականորեն բարեփոխումներ կատարելու միջոցով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել զարգացած, գեղեցիկ և բարեկարգ:
- Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.
- Գյուղացիներին ապահովել մաքուր խմելու ջրով,
- Զարգացնել բուսաբուծությունն ու անասնաբուծությունը

- Ակտիվացնել բնակչության մշակութային կյանքը,
- Կազմակերպել համայնքաբնակների հանգիստը
- Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը:
- Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը նվազեցնել 15%-ով,
- Համայնքի սեփական տարեկան եկամուտները հասցնել 35%-ով աճի,
- Համայնքում գրանցված բնակիչների թվի աճը նախորդ տարվա համեմատ հասցնել 5%-ով աճի:

3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

- 1) Գործարար միջավայրը բարելավել և ձեռնարկատիրությունը խթանել:
- 2) Համայնքի գույքը կառավարել:
- 3) նախադպրոցական կրթությունը և արտադպրոցական դաստիարակությունը կազմակերպել:
- 4) Ակտիվ մշակութային և մարզական կյանքն ակտիվացնել՝ երիտասարդության ներգրավմամբ:
- 5) Բարելավել համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը:
- 6) Ապահովել ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը:
- 7) Համայնքում բնակարանային շինարարությունը խթանել:
- 8) Ապահովել համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը: Կազմակերպել համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը: Կոմունալ տնտեսության աշխատանքներն ապահովել, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը կազմակերպել,
- 9) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքը կազմակերպել, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը կազմակերպել:
- 10) Աջակցել պետության պաշտպանության իրականացման հարցում:
- 11) Իրականացնել աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումները:
- 12) Գյուղատնտեսության զարգացումը խթանել:
- 13) Կազմակերպել համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը:
- 14) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումն ապահովել:
- 15) Համայնքում ծնելիությունը և բազմազավակությունը խթանել:

- 16) Ապահովել համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը:
- 17) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցությունը խթանել:
- 18) Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստել:
- 19) Բարեգործությունը խթանել՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

ԾՐԱԳԻՐ 1

Սարատովկա համայնքում Գետավան գյուղի բնակիչների սոցիալ - տնտեսական վիճակը բարելավելու նպատակով կիրականացվի «**Գետավան գյուղի գազաֆիկացում**» ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ բարձրացնել գյուղի բնակիչների սոցիալ-տնտեսական պայմանները:

Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1. Գետավան գյուղի գազամատակարարումը բնական գազով

Ծրագրի հիմնական գործողություններն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Ձեռք բերել 4կմ երկարության համար գազատար խողովակներ :

1.2. Գլխավոր մայրուղուց դեպի Գետավան գյուղ տանող ճանապարհին գազատարի հենարաններ տեղադրելու համար փոսեր փորել:

1.3. Մայրուղային գազատարը կառուցել վերգետնյա եղանակով,

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

2.1. Խողովակները միացնել:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, մեխանիզացիա, սարքավորումներ և անհրաժեշտ գումարի 3%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Գետավան գյուղի բոլոր բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.: Ծրագրի համառոտ նկարագրություն. Ստանալ <<Գազայրոմ Արմենիա>>ՓԲԸ-ից գազատարի միացման թույլտվություն: Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծը և բյուջեն: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության

արժանանալուց հետո, ստանալ համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները:
Կատարել համայնքային ներդրումներ:

Ծրագրի բյուջեն կազմում է՝

Ընթացիկ ծախսեր՝ 2մլն դրամ

Կապիտալ ծախսեր՝ 14մլն դրամ

Ընդհանուր բյուջեն՝ 16մլն դրամ

ԾՐԱԳԻՐ 2

Սարատովկա համայնքի Գետավան գյուղում կոմունալ տնտեսության աշխատանքները կազմակերպելու նպատակով կիրականացվի «**Որակյալ խմելու ջրով ապահովում, ջրագծի կառուցում**» ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ գյուղի բնակիչներին բավարար քանակի մանրէազերծված ջրով ապահովումը: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1. Կառուցել նոր ջրագիծ և կանոնակարգված ջրի բաշխում

Ծրագրի հիմնական գործողություններն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Ձեռք բերել խողովակներ 5կմ-ի համար, էլեկտրոդ և 25 հատ փականով բաժանարարներ:

1.2. Գործող ջրագծի վնասված խողովակները փոխարինել նորով:

1.3. Տեղադրել փականով բաժանարարները՝ բաշխումը կատարելով հավասարաչափ:

1.4. Երկրորդ ջրագծի խողովակաշարն անցկացնել՝ միացնելով գործող ջրագծի ներքին ցանցին:

1.5. Պարբերաբար կատարել խմելու ջրի մանրէազերծում սանէպիդիոկենտրոնի օգնությամբ:

2. Կազմակերպել աղբահանություն:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, մեխանիզացիա, սարքավորումներ և անհրաժեշտ գումարի 3%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Գետավան գյուղի բոլոր բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.: Ծրագրի համառոտ նկարագրություն. Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, ստանալ համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ: Ներկայումս համայնքում ջուրը հավասարաչափ չի բաշխված, ջրի քանակը չի բավարարում բոլորին և ջուրը չի ֆիլտրվում ու չի մանրէազերծվում, բնակչության 10%-ը ջուր չունեն: Ծրագրի իրականացումից հետո համայնքի բոլոր բնակիչները կապահովվեն

բավարար քանակի մաքուր ջրով: Համայնքում առկա զանազան հիվանդությունների վտանգը կվերանա, կոմունալ տնտեսությունը կզարգանա:

Ծրագրի բյուջեն կազմում է՝

Ընթացիկ ծախսեր՝ 3մլն դրամ

Կապիտալ ծախսեր՝ 10մլն դրամ

Ընդհանուր բյուջեն՝ 13մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 3

Սարատովկա համայնքում համայնքային և միջհամայնքային ճանապարհի վերանորոգման նպատակով կիրականացվի «**Ճանապարհների բարեկարգում**» ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ համայնքի բնակիչներին բարեկարգ ճանապարհով և հասարակական տրանսպորտով ապահովումը: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Կատարել միջհամայնքային ճանապարհների բարեկարգում:

1.2. Կատարել ներհամայնքային ճանապարհների բարեկարգում:

1.3. Կատարել դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում:

1.4. Հեղեղատարներ կառուցել:

1.5. Ներհամայնքային ճանապարհների լուսավորություն անցկացնել:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, մեխանիզացիա, սարքավորումներ և անհրաժեշտ գումարի 3%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Սարատովկա համայնքի բոլոր բնակիչները : Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.: Ծրագրի համառոտ նկարագրություն. Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, մրցույթ հայտարարել ճանապարհաշինարարական աշխատանքներ կատարող կազմակերպություն գտնելու նպատակով: Ստանալ համապատասխան գումարը, փոխանցել գումարն ընտրված կազմակերպությանը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ: Այժմ համայնքի ճանապարհները գտնվում են քայքայված վիճակում, և բացակայում է փողոցային լուսավորությունը: Համայնքի 25 %-ը չի կարողանում օգտվել հասարակական տրանսպորտից: Ծրագրի իրականացումից հետո համայնքում կստեղծվեն տրանսպորտի բոլոր միջոցների համար բավարար երթևեկության պայմաններ:

Ծրագրի բյուջեն կազմում է՝

Ընթացիկ ծախսեր՝ 1,5 մլն դրամ
Կապիտալ ծախսեր՝ 5 մլն դրամ
Ընդհանուր բյուջեն՝ 6,5 մլն դրամ:

4. ՀԶԾ ֆինանսավորում

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերը ֆինանսավորվելու են՝

- Համայնքի սեփական եկամուտներից,
- Բարեգործություն/նվիրատվություններից
- Այլ աղբյուրներից,

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացման համար չկան առկա միջոցներ, նրանց համար անհրաժեշտ է գումար ապահովել:

5. ՀԶԾ մոնիթորինգ

ՀԶԾ մոնիթորինգը կիրականացվի համաձայն Մոնիթորինգի անձնագրով (Հավելված 3) սահմանված ցուցանիշների և ժամանակացույցի:

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 1

«Գետավան գյուղի գազաֆիկացում»

(Ծրագրիանվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Սարատովկա համայնքում սոցիալ-տնտեսական զարգացումը խթանել:						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքաբնակների եկամուտների աճի ապահովում						
	Ցուցանիշներ Եկամտի աճ(%)	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		100	105	110	115	120	130
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Կառուցված գազատար						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	3	7	7	7	7
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1. Ձեռք բերել 4կմ-ի համար գազատար խողովակներ:</p> <p>1.2. Գլխավոր մայրուղուց դեպի Գետավան գյուղ տանող ճանապարհին գազատարի հենարաններ տեղադրելու համար փոսեր փորել:</p> <p>1.3. Մայրուղային գազատարը կառուցել վերգետնյա եղանակով:</p> <p>1.4. Խողովակները միացնել:</p>						
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր՝ 2մլն դրամ</p> <p>Կապիտալ ծախսեր՝ 14մլն դրամ</p> <p>Ընդհանուր բյուջեն՝ 16մլն դրամ</p>						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, մեխանիզացիա, դրամական միջոցներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը						
Ծրագրի հիմնական շահառուները	Սարատովկա համայնքի Գետավան գյուղի բոլոր բնակիչները:						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2021թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ներկայումս Գետավան գյուղը զրկված է բնական գազի մատակարարումից:						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 2

« Որակյալ խմելու ջրով ապահովում և ջրագծի կառուցում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Սարատովկա համայնքի Գետավան գյուղում կազմակերպե լկոմունալ տնտեսության աշխատանքները:						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքաբնակներին բավարար քանակի մանրէազերծված ջրով						
	Ցուցանիշներ աճ (%)	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2016	2017	2018	2019	2020
100	102	105	110	120	150		
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Վերանորոգված խմելու ջրի գործող ջրագիծ, կառուցված երկրորդ ջրագիծ և կանոնակարգված ջրի բաշխում:						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2016	2017	2018	2019	2020
	0	3	7	7	7	7	
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1. Ձեռք բերել խողովակներ 5կմ-ի համար, էլեկտրոդ և 25 հատ փականով բաժանարարներ:</p> <p>1.2 Գործող ջրագծի խողովակները փոխարինել նորով:</p> <p>1.3 Տեղադրել փականներով բաժանարարները` բաշխումը կատարելով հավասարաչափ:</p> <p>1.4 Երկրորդ ջրագծի խողովակաշարն անցկացնել` միացնելով գործող ջրագծի ներքին ցանցին</p> <p>1.5 Պարբերաբար կատարել խմելու ջրի մանրէազերծում սանէպիդիկենտրոնի օգնությամբ:</p> <p>2.1 Կազմակերպել աղբահանություն:</p>						
Ծրագրի բյուջեն	<p>Ընթացիկ ծախսեր` 7մլն դրամ</p> <p>Կապիտալ ծախսեր` 6մլն դրամ</p> <p>Ընդհանուր բյուջեն` 13մլն դրամ:</p>						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, մեխանիզացիա, դրամական միջոցներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը						
Ծրագրի հիմնական	Սարատովկա համայնքի Գետավան գյուղի բոլոր բնակիչները:						

շահառուները	
Ծրագրի սկիզբը և ավարտ	Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2021թ.
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ներկայումս համայնքում ջուրը հավասարաչափ չի բաշխված, ջրի քանակը չի բավարարում բոլորին և ջուրը չի ֆիլտրվում ու չի մանրէազերծվում, բնակչության 10%-ը ջուր չունեն: Ծրագրի իրականացումից հետո համայնքի բոլոր բնակիչները կապահովվեն բավարար քանակի մաքուր ջրով:

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 3

«Ճանապարհների բարեկարգում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի համայնքային և միջհամայնքային ճանապարհների վերանորոգում						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքի բնակիչներին բարեկարգ ճանապարհով և հասարակական տրանսպորտով ապահովում:						
	Ցուցանիշներ աճ(%)	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	100	105	110	115	125	140	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Բարեկարգված միջհամայնքային, ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհներ						
	Ցուցանիշներ կմ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		1	5	7	15	25	40
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Կատարել միջհամայնքային ճանապարհների բարեկարգում: 1.2. Կատարել ներհամայնքային ճանապարհների բարեկարգում: 1.3. Կատարել դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում: 1.4. Հեղեղատարներ կառուցել: 1.5. Ներհամայնքային ճանապարհների լուսավորություն անցկացնել:						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 1,5 մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 5 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 6,5 մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, մեխանիզացիա, դրամական միջոցներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը և բնական աղետները						
Ծրագրի հիմնական շահառուները	Սարատովկա համայնքի բոլոր բնակիչները						
Ծրագրի սկիզբը և ավարտ	Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2021թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Այժմ համայնքի ճանապարհները գտնվում են քայքայված վիճակում, բացակայում է						

	<p>փողոցային լուսավորությունը: Համայնքի 25 %-ը չի կարողանում օգտվել հասարակական տրանսպորտից: Ծրագրի իրականացումից հետո համայնքում մեքենաները կերթնեկեն անվտանգ և գյուղացիների սոցիալ-տնտեսական վիճակը կբարելավվի:</p>
--	---